

Նորություններ

Հայկական սփյուռքի դերն անգնահատելի է. ՀՀ ԱԺ խոսնակ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խոսնակ Հովիկ Աբրահամյանը կարծում է, որ համազգային խնդիրների լուծման գործում հայկական սփյուռքի դերն անգնահատելի է, հաղորդում է ՀՀ ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչությունը:

«Այսօր, շնորհիվ մեր ժողովրդի բոլոր հատվածների նվիրվածության, միասնաբար գործելու պատրաստակամության, Հայաստանը կարողանում է լուծել իր առջև ծառայած, երբեմն անհավանական քվեացող խնդիրները»,- Փարիզում Ֆրանսիայի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է Հովիկ Աբրահամյանը: Նրա խոսքերով՝ այդ միասնության շնորհիվ Հայաստանը և ողջ հայությունը բնակիչներ են զարգացման և համազգային խնդիրների լուծման նոր ժամանակահատված, որտեղ անգնահատելի է հայ սփյուռքի ներդրումը:

«Հայաստան-Սփյուռք կապերի զարգացման և ամրապնդման և, մասնավորապես, Սփյուռքի հայապահպանության խնդիրների լուծմանը գործադիր կանգնելու պատրաստակամությամբ էր պայմանավորված Հայաստանի կառավարության կազմում Սփյուռքի նախարարության ստեղծումը»,- ասել է խոսնակը:

Հայաստանում մարդահամար կանցկացվի 2011 թվականին

Այս մասին հայտարարել է Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ստեփան Մնացականյանը:

«Բնակչության մարդահամարը նախապատրաստելու համար ստեղծվել է հատուկ հանձնաժողով Երևանում և մարզերում, որն արդեն անցկացրել է իր առաջին նիստն ու սահմանել գործունեության գրաֆիկը»,- ասել է Մնացականյանը:

ՀՀ բնակչության հերթական մարդահամարը հանրապետությունում տեղի կունենա 2011 թ-ի հոկտեմբերի 12-21-ը, իսկ փորձնականը՝ 2010 թ-ի ակտիվի 14-23-ը: Հայաստանի անկախացումից ի վեր բնակչության առաջին մարդահամարն անցկացվել է 2001 թ-ի հոկտեմբերի 10-19-ը: Դրա տվյալներով՝ ՀՀ բնակչության քանակը 3,2 մլն մարդուց փոքր ինչ ավելի է եղել:

Աշխարհի ամենաերկար ճոպանուղին կկառուցվի Հայաստանի հարավում

Հալիծորից դեպի Տաթևի վանքային համալիր աշխարհի ամենաերկար ճոպանուղու (այդպես են պնդում նախագծի հեղինակները) կառուցումը վստահվել է շվեյցարական «Գարավենտա» ընկերությանը:

Ճոպանուղու կառուցման արժեքը 6,8 մլն եվրո է, այն 20 մլն դոլար արժողությամբ «Տաթևի վերածնունդ և կառուցում» եռամյա ծրագրի մասն է: Ծրագրով նախատեսվում է նաև հյուրանոցի կառուցումը Հալիծոր գյուղում, վանքային համալիրի վերանորոգում, ուսումնական կենտրոնի կառուցում:

Ծրագրի իրականացման համար պետական բյուջեից միջոցներ չեն ծախսվելու, հիմնական հովանավորը Ռուբեն և Վերոնիկա Վարդանյաններն են:

Ճոպանուղու երկարությունը լինելու է 5,7 կմ: Այն թույլ կտա Հալիծորի վանք հասնել 10 րոպեում: Ճոպանուղու մեկ վագոնը կարող է փոխադրել 25 մարդ, երթուղու պարբերականությունը՝ 10 րոպե մեկ անգամ:

Ճոպանուղու կառուցումն արդեն սկսվել է, ներկայում իրականացվում են հողային աշխատանքները, իսկ բուն շինարարությունը նախատեսվում է սկսել սեպտեմբերի կեսերին, մեկ տարի անց այն արդեն շահագործման կհանձնվի:



«Ճանաչել վիճատություն և վխրատ, իմանալ լրանա հանձարոյ»

Սովորե՛ք Հայերեն
Учите армянский!

խոսե՛ք Հայերեն
Говорите по-армянски!

խորհե՛ք Հայերեն
Думайте по-армянски!

Ապրե՛ք Հայերեն
Живите по-армянски!

УРОК 19 ԴՄԱ 19

Отрицательные местоимения Отрицательные предложения

Наиболее употребительными отрицательными местоимениями являются: ոչ ոք [воч вок] ոչ մեկը [воч мэкы] никто ոչ մի [воч ми] никакой, ни один ոչինչ [вочинч] ничего

Они употребляются в отрицательных предложениях, в которых в армянском языке, как и в русском, сказуемое обязательно ставится в отрицательной форме. Ոչ ոք չեկավ: [воч вок чэ-кав] Никто не пришел. Նա ոչինչ չաւազ: [на вочинч часаւ] Он ничего не сказал. Այդ մ ասին ոչ մեկը չգիտեր: [այд масин воч мэкы чыгитер] Об этом никто не знал.

Ես նրանից ոչ մի տեղեկություն չունեմ: [ես нранич воч ми тэх'экут'йун чунэм]. У меня о нем нет никаких сведений. В армянских отрицательных предложениях, независимо от наличия или отсутствия отрицательного местоимения, сказуемое всегда ставится в отрицательной форме: Ես այսօր չգնացի դասի: [ес айсор чыгынаци даси] Я сегодня не пошел на урок. Երեկ շոգ չէր: [ерэк шок чэр] Вчера не было жарко.

Վաղը մենք չենք աշխատելու: [вахы мэնк чэнк' ашхателу] Завтра мы не работаем. В ответных репликах при отрицании могут употребляться отрицательные частицы ոչ [воч] нет или չէ [чэ] (в разговорной речи):

– Այսօր կարո՞ղ ես գալ մեր տուն: – Сегодня ты можешь прийти к нам (домой)?
– Ոչ (չէ), չեմ կարող: – Нет, не могу.
– Գնում ես աշխատանքի՞: – Идешь на работу?
– Ոչ (չէ) աշխատանքի չեմ գնում, գնում եմ խանութ: – Нет, иду не на работу, иду в магазин.

В повелительных предложениях отрицательная форма глагола сказуемого образуется при помощи отрицательной частицы մի, которая всегда произносится с ударением: Գնա տուն: – Уйи գնա տուն: Иди домой! – Не ходи домой! Գիրքը տուր Արամին: – Գիրքը մի տուր Արամին: Дай книгу Араму! – Книгу не давай Араму!

Особенности армянской пунктуации

Вы уже знаете все буквы и звуки армянского языка, следовательно, можете читать любые армянские тексты. Чтобы правильно читать тексты, вы должны знать также особенности армянской пунктуации, которая во многом отличается от русской. Познакомьтесь с армянской пунктуацией.

1. : վերջակետ [вэрчакэт] (букв. конечная точка). Как вы уже знаете, этот знак по функции соответствует русской точке: Երևան – столица Армении.

2. . միջակետ [միչակэт] (букв. середина точка). По функции соответствует русской точке с запятой или двоеточию: Он сказал: «Завтра я занят».

3. , ստորակետ [ստоракэт]. Запятая в армянском языке по функции в основном совпадает с русской запятой.

4. ‘ րուք [бут]. Это отдельный пояснительный знак, ставится с наклоном после слова сверху. По функции соответствует русскому запятой, тире или двоеточию: Այդ լսելով՝ ես շատ զարմացա: Услышав это, я очень удивился. Արամը գնաց թատրոն, , իսկ ես՝ գրադարան: Арам пошел в театр, а я – в библиотеку. Սուրենը՝ իմ ընկերը, լավ է սովորում: Сурен, мой товарищ, хорошо учится.

5. ˆ փոփոխական նշան [փարцакан նշան]. Ставится в предложении над последним гласным того слова, которое заключает в себе вопрос: Ի՞նչ ես անում: Что ты делаешь? Որտեղի՞ց ես գալիս: Откуда идешь? Գնում ես համերգ: На концерт идешь? Գնո՞ւմ ես համերգ: Идешь на концерт?

6. ‘ Զнак ударения շեշտ [шэшт]. Ставится в побудительных предложениях над последним гласным акцентно выделяемого слова и соответствует по функции русскому восклицательному знаку: Արի՛ այստեղ: Иди сюда! Տո՛ւն արի: Иди домой! Արա՛մ, եկ այստեղ: Арам, иди сюда!

7. ~ փոփոխական նշան [բա-цаканчакан նշան]. Ставится в восклицательных предложениях над последним гласным того слова, которое выражает восклицание, восторг, призыв и т. д. Ինչպիսի՞ գեղեցկություն: Какая красота! Ի՞նչ լավ երեկո է: Какой хороший вечер!

Таким образом, русскому восклицательному знаку в армянском языке соответ-

ствуют два знака: знак ударе-ния (‘) и знак восклица-ния (~).

В армянском языке употребляются также кавычки, скобки, многоточие, которые по форме и функции совпадают с соответствующими русскими знаками. Правила употребления прописных букв в армянском языке такие же, как и в русском.

Упражнения

1. Прочитайте, перепишите и переведите следующие слова:

մեկ, առաջին, երկու, երկրորդ, ով, ովքեր, գրել, կարդալ, ուտել, խմել, ասել, հայր, մայր, բույր, եղբայր, աղջիկ, տղա:

2. Перепишите следующие слова и напишите их транскрипции:

երբ, երգ, որ, գրել, օրինակ, որոշել, գրում եմ, երկինք, չորս, վերջ, գրիչ, երկու, բարձր, չգրել, չխոսել, գիրք, հայրս:

3. Переведите следующие предложения на русский язык:

1. Ես ունեմ մի ընկեր: 2. Նրա անունը Անդրեյ է: 3. Իմ ընկերը (ընկերուհին) ուզում է սովորել հայերեն: 4. Մենք միասին սովորում ենք հայերեն: 5. Մեր ուսուցիչը Աճառ Գրիգորյանն է: 6. Տո՛ւր գիրքը (քո գիրքը): 7. Վերցրո՛ւ գիրքս:

Обратите внимание на формы տո՛ւր дай! и վերցրո՛ւ возьми! Это формы ед. ч. повелительного наклонения глаголов տալ давать и վերցնել брать. Эти формы очень употребительны, запомните их, ср. Գո՛ւր տո՛ւր: Дай хлеба! Չուր տո՛ւր: Дай воды! Վերցրո՛ւ այս տետրը: Возьми эту тетрадь!

Курс ведет
Армине ОБСЕПАН



ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ

Դ.

«Երանի~ նրանց, որ արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագնան» (Մատթ. Ե 6)

Երբ մարդ դարձի է գալիս առ Աստված (հոգով աղքատություն), ձեռք է բերում ճշմարիտ ապաշխարություն (սգավորություն) և պայքարում է մարմնի մեղսահակ կամքի դեմ (հեզություն), նա սկսում է հասկանալ, որ առանց Աստծո օգնության և երկնային շնորհների ինքը ոչինչ չի կարող անել: Այս մասին է խոսում այս երանին: Ինչպես մարմինը չի կարող գոյատևել առանց կերակուրների և ըմպելիքների, այնպես էլ հոգին չի կարող կենդանի մնալ առանց հոգևոր սննդի: Ուստի չի ասում՝ ովքեր ունեն քաղցն ու ծարավը, շեշտելու համար, որ հոգևոր սնունդն անհրաժեշտ է մարդուն, և որ առանց Աստծո հետ կենդանի հաղորդակցության մարդու հոգին մեռած է: Այս հոգևոր կերակուրների և ըմպելիքների ամբողջությունը արտահայտված է մեկ կարևոր բառով՝ արդարություն:

Արդարությունը նախ Ինքը՝ Մեր Տեր Հիսուս Զրիստոսն է, «որ արդարություն և սրբություն եղավ մեզ համար» (Ա Կոր. Ա 30): Նա Ինքն Իրեն կոչում էր «երկնքից իջած հաց» (Հովհ. Զ 41) և «ծարավյալների ջուր» (Հովհ. Դ 13-14): Արդարություն է Աստծո խոսքը, որ սնում է կենդանացնում է հոգին. «Ոչ միայն հացով է ապրում մարդ, այլ ամենայն խոսքով, որ ելնում է Աստծո բերանից» (Մատթ. Դ 4): Արդարություն է Հիսուս Զրիստոսի կենդանարար Մարմինը և Արյունը. ինչպես փոքրիկ թթխմորն է թթվեցնում խմորը, այնպես էլ ս. հաղորդությունը, ընդխառնվելով մեզ հետ, հոգևոր կենդանություն է տալիս և աստվածացնում մեզ: Արդարությունը խոհեմության, արիության և ողջախոհության հետ միասին կազմում է հոգու չորս առաքինությունները, և վերջին երեքն ուղղվում և ամբողջանում են արդարությամբ, ուստի միայն արդարությունն է ասվում այստեղ: Արդարությունն իր մեջ բովանդակում է խոսքով և գործով

կատարվող բոլոր հոգևոր բարիքները. ինչպես բոլոր չարիքների անունն անիրավությունն է, այնպես էլ բոլոր բարիքների անունը՝ արդարություն: Արդարություն են աստվածային սերը և իմաստությունը, և երանի նրան, ով ունի աստվածային սիրո և իմաստության քաղցը, որպեսզի հագնան անձառ ուրախություններով:

Ովքեր ունեն Աստծո ներկայության և սիրո, աստվածագիտության, հոգևոր առաքինությունների և հոգևոր բարիքների քաղցն ու ծարավը, նրանք այս կյանքում կհագնան աստվածային շնորհներով և Ս. Հոգու կենդանի ներկայությամբ: Սակայն կատարյալ հագնելու լինելու է երկնային հարսանիքի ժամանակ, ուր կոչված են արդարներն ու սուրբերը՝ վայելելու հավիտենական կյանքի անսպառ և անմկազ բարիքները:

«Գանձասար»
աստվածաբանական կենտրոն